



Ստրասբուրգ, 30 նոյեմբերի, 2007թ.

CCPE (2007) 25

**ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱԽԱՁՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
(ԵԴԽԽ/CCPE)**

Կարծիք թիվ (2007)1

*« Զրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության
ամրապնդման միջոցները »*

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ընդունված՝ ԵԴԽԽ 3-րդ լիագումար նիստի ընթացքում
(Ստրասբուրգ, 28-30 նոյեմբերի 2007)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Consultative Council of European Prosecutors/Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդը (այսուհետ՝ CCPE) ստեղծվել է 2005թ. հուլիսի 13-ին Նախարարների կոմիտեի կողմից, դատախազությանն առնչվող հարցերով Կարծիքներ նախապատրաստելու նպատակով և ի կատարումն 2000թ. հոկտեմբերի 6-ին ընդունված «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» թիվ Rec(2000)19 Հանձնարարականի: Օրենքի գերակայության և մարդու իրավունքները հանդիսանում են դատախազների գործունեության հիմնական սկզբունքները. *«...դատախազները իշխանության այն ներկայացուցիչներն են, որոնք հանդես գալով հասարակության անունից և ելնելով հանրության շահերից, ապահովում են օրենքի կիրառումը այն դեպքերում, երբ խախտվում է օրենքը, նշանակում են քրեական պատիժ՝ հաշվի առնելով մարդու իրավունքների պաշտպանության և քրեական արդարադատության համակարգի արդյունավետության ապահովման անհրաժեշտությունը՝»:*

2. Վարչավայի հռչակագիրը և Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների խորհրդի գազաթնաժողովին ընդունված Գործողությունների պլանը² շեշտել է Եվրոպայի խորհրդի դերը մարդու իրավունքների, ժողովրդավարության զարգացման և օրենքի գերակայության հաստատման հարցերում և հաստատել ահաբեկչության, կոռուպցիայի և կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարելու իր պահանջը և Եվրոպայի խորհրդի շրջանակներում իրավական համագործակցության վերաբերյալ իրավական փաստաթղթերի և իրականացման մեխանիզմների հետագա զարգացման անհրաժեշտությունը: Վարչավայի գազաթնաժողովը պահանջ է առաջադրել ամրապնդել Եվրոպական միության հետ համագործակցությունը, մասնավորապես մարդու իրավունքների³, ժողովրդավարության և օրենքի գերակայության ոլորտներում:

3. Թիվ Rec(2000)19 Հանձնարարականի 37 և 39 Հոդվածները ներառում են քրեական գործերով միջազգային համագործակցության ապահովման վերաբերյալ մի շարք դրույթներ, այս մասին խոսվում է Բացատրական հուշագրում: Մասնավորապես,

¹ Հանձնարարական թիվ Rec (2000)19, Հոդված 1
² Վարչավա, 16-17 մայիսի, 2005թ., տես՝ փաստաթղթեր վերջնական CM (2005)79 եւ վերջնական CM (2005)80.
³ ԵԴԽԽ կանդիդատնա մարդու իրավունքների հիմնախնդրի վերաբերյալ դատախազների վերապատրաստման հարցին ավելի ուշ փուլերում.

Նախարարների կոմիտեն նշում է, որ «հաշվի առնելով մի շարք առկա միջազգային փաստաթղթեր և հանձնարարականներ, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի շրջանակներում ոլորտի հատուկ կարգավիճակը, կոմիտեն հատուկ կարևորում է ներկայիս իրավիճակը բարելավելու նպատակով պրակտիկ միջոցների կիրառման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով դատախազների կարևոր դերը քրեական գործերով միջազգային համագործակցության ոլորտում»: Նախարարների կոմիտեն նախ և առաջ լավատեղյակ է ներպետական միջազգային համագործակցության ինստիտուցիոնալ պրակտիկայի և համակարգող մեխանիզմների կիրառման դժվարություններին: Հանձնարարականն ընդգծում է, որ դատախազը **«ռողակիորեն կամ իր որոշման միջոցով մասնակցում է իրավական փոխօգնության մասին խնդրանքի բոլոր ընթացակարգերին»**: Ներպետական իրավական համակարգերում դատախազներն ունեն միջազգային համագործակցության ակտիվ մասնակիցների պարտականություններ, իսկ պետության կողմից փոխօգնության խնդրանք ստանալու դեպքում՝ հանձման, կալանքի թույլտվության կամ այլ պարտականություններ: Նման պատասխանատվությունը պահանջում է համագործակցության ոլորտի վերաբերյալ որոշակի գիտելիքների առկայություն և համագործակցության ընդհանուր համակարգման հնարավորություններ:

4. Սույն Կարծիքը նախապատրաստվել է 2006թ. նոյեմբերի 29-ին Նախարարների կոմիտեի կողմից ընդունված CCPE աշխատանքները կազմակերպելու Գործողությունների պլանի⁴ շրջանակներում: Կարծիքը նպատակ է հետապնդում ընդգծել հիմնական տարրերը, որոնք նպաստում են իրավական փոխօգնությունը ամրապնդմանը, դատախազների տեսանկյունից, որոնք հանդիսանում են գործող մասնագետներ և համագործակցության հիմնական դերկատարներ:

5. CCPE լավատեղյակ է, որ քրեական հարցերով միջազգային համագործակցությունը կարևոր հիմնախնդիր է ոչ միայն դատախազների համար: Հանձման, կալանքի թույլտվության, երկրի սահմանից դուրս ապացույցների ձեռք բերման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են դատավորները: Նրանք Եվրոպայի խորհրդի շրջանակներում ունեն իրենց ներկայացուցչական մարմինը՝ Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհուրդը (CCJE): Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործում են նաև այլ կոմիտեներ, օրինակ Հանցագործությունների հարցերով եվրոպական կոմիտեն (CDPC), որը գործում է Քրեական գործերով համագործակցության մասին եվրոպական կոնվենցիաների կիրառման փորձագետների կոմիտեի (PC-OC) շրջանակներում, վերջինս

⁴ CCPE (2006)05 Rev վերջնական

բացառիկ դեր ունի քննարկվող ոլորտում⁵, ինչպես նաև Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը (CEPEJ):

6. Սույն Կարծիքը նախապատրաստելիս, CCPE հաշվի է առել համընդհանուր և տարածաշրջանային իրավական փաստաթղթերը, մասնավորապես Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիաները, որոնք բերված են սույն փաստաթղթի Հավելվածում: CCPE նաև հղում է կատարել Միջազգային և եվրոպական իրավունքի արդյունավետ կիրառման գործում ներպետական դատավորների դերի մասին Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհրդի թիվ (2006)⁹ Կարծիքին:

7. CCPE հաշվի է առել քրեական գործերով միջազգային համագործակցության հարցերին նվիրված, քաղաքական և իրավապահ մարմինների պաշտոնյաների և դատախազության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած համաժողովների, մասնավորապես, Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում աշխատող դատախազների առաջին համաեվրոպական կոնֆերանսի (Կասերտե, 2000)⁶, Եվրոպայի գլխավոր դատախազների 7-րդ կոնֆերանսի (Մոսկվա, 2006)⁷ և Արդարադատության և Ներքին գործերի նախարարների բարձրաստիճան կոնֆերանսի (Մոսկվա, 2006)⁸ աշխատանքների արդյունքներն և դրանց շրջանակներում ընդունված եզրակացությունները:

8. Սույն Կարծիքը նախապատրաստելիս, CCPE, գիտնական-փորձագետի մասնակցությամբ⁹, վերլուծել է այս նպատակով կազմված հարցաշարին¹⁰ 30 անդամ-պետությունների կողմից տրված պատասխանները: Համապատասխան եզրակացությունը քննարկվել է Քրեական ոլորտում դատախազների միջազգային համագործակցության թեմայով եվրոպական կոնֆերանսի (Վարշավա, 4-5 2007)¹¹ ընթացքում, որին ներկա են գտնվել Եվրոպական միության անդամ-պետությունների դատախազները և իրավական

⁵ Տես՝ մասնավորապես ԵԿՀՀ միջազգային համագործակցության վերաբերյալ քրեական ոլորտում ընդունված փաստաթղթերը 56-րդ հանդիպման ժամանակ (Ստրասբուրգ, 18-22 հունիսի, 2007):

⁶ Կազմակերպված Եվրոպայի խորհրդի կողմից, Սաֆիայի դեմ գրասենյակի եւ Նեապոլի համալսարանի հետ համատեղ Կասերտայում (Իտլիա), 8-10 սեպտեմբերի, 2000:

⁷ Եվրոպայի գլխավոր դատախազների 7-րդ նիստը (Մոսկվա, 5-6 հուլիսի, 2006)՝ կազմակերպված Եվրոպայի խորհրդի կողմից ՌԴ գլխավոր դատախազության հետ համատեղ, նվիրված «Դատախազի դերը անձանց պաշտպանության հարցում» թեմայով:

⁸ (Մոսկվա, 9-10 նոյեմբերի, 2006). «Քրեական արդարադատության ոլորտում եվրոպական համագործակցության հաստատումը թեմայով:

⁹ Ջոանա Գոմես-Ֆերեյրա, դատախազ, Գլխավոր դատախազություն, Պորտուգալիա: Տես գեկույցը CCPE-BU(2007)12:

¹⁰ Փաստաթուղթը՝ CCPE-BU(2006)06

¹¹ Եզրակացությունները՝ CPE(2007)Council 1 փաստաթղթում:

համագործակցության մարմինների ներկայացուցիչները (Eurojust, European Judicial Network):

9. Սույն Կարծիքը նախապատրաստելիս, CCPE հավատարիմ է Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրին¹², որի «ընդհանուր առաջնահերթությունները և համագործակցության ոլորտները» ներառում են «մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, օրենքի գերակայության, իրավական համագործակցության, նոր մարտահրավերների հաղթահարման» ոլորտները:

ՆԵՐԿԱՅԻՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ և ԱՌԿԱ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Քրեական արդարադատություն հարցերով միջազգային համագործակցության ամրապնդումն ունի կարևոր նշանակություն, քանի որ միջազգային համայնքը արձագանքում է միջազգային հանցավորության, ահաբեկչության և կոռուպցիայի կողմից հասարակությանը սպառնացող վտանգներին: Թեև Նախարարների կոմիտեի 1997թ. Հանձնարարականը¹³ հիմնականում առնչվում էր կոռուպցիայի հիմնախնդրին, այն արժանի է հիշատակվելու այս ենթատեքստում իր ընդհանուր կիրառման պատճառով. «կոռուպցիան իրենից լուրջ վտանգ է ներկայացնում Եվրոպայի խորհրդի հիմնարար սկզբունքներին և արժեքներին, այն խարխլում է քաղաքացիների վստահությունը ժողովրդավարության նկատմամբ, թուլացնում է օրենքի գերակայությունը, առաջացնում է մարդու իրավունքների ժխտում և խոչնդոտում է սոցիալական և տնտեսական զարգացմանը»:

11. Թիվ (2000)19 Հանձնարարականը լրացվել է ոլորտում արձանագրված մի շարք ձեռքբերումներով.

- հիմնական կոնվենցիաները ընդունվել են Եվրոպայի խորհրդի շրջանակներում, մասնավորապես. Քրեական գործերով փոխադարձ օգնության եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությունը (CETS No 182), Կիբեռ հանցագործությունների մասին կոնվենցիան (CETS No 185) և դրա լրացուցիչ Արձանագրությունը համակարգչային ցանցերի միջոցով կատարվող ռասիստկան և օտարատյացամետ բնույթի գործողությունների քրեականացման վերաբերյալ (CETS No 189), Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիան

¹² Ստորագրված՝ Ստրասբուրգում 2007թ. մայիսի 23-ին:

¹³ Բանաձև (97) 24 կոռուպցիայի դեմ պայքարի 20 ուղեցույցների վերաբերյալ, որը ընդունվել է Նախարարների խորհրդի կողմից 1997թ. նոյեմբերի 6-ին:

փոփոխող արձանագրություն(CETS No 190), Ահաբեչության կանխարգելման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No 196), Մարդկանց տրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No 197), Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեչության ֆինանսավորման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS No 198): Բացի այդ, Վերագրային հանցավորության դեմ ՄԱԿ-ի Պալեռնոի կոնվենցիան¹⁴, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան¹⁵, Միջուկային ահաբեչության գործողությունների դեմ պայքարի միջազգային կոնվենցիան¹⁶, Եվրոպական միության անդամ-պետությունների միջև քրեական գործերով փոխադարձ օգնության կոնվենցիան¹⁷, Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին¹⁸ ԱՊՀ կոնվենցիան նույնպես ընդունվել են իրավական ոլորտում համագործակցությունն ուժեղացնելու նպատակով: Ամեն դեպքում, պետք է նշել, որ ոչ բոլոր երկրներն են վավերացրել նշված կոնվենցիաները և վերոհիշյալ կոնվենցիաներից ոչ բոլորն են ուժի մեջ մտել, իսկ դա դանդաղեցնում է նրանց արդյունավետ կիրառումը իրավական համակարգի կողմից: Այնուամենայնիվ, Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված փաստաթղթերի առկա թերությունները քննարկվել են Մոսկվայում տեղի ունեցած Գլխավոր դատախազների կոնֆերանսի ժամանակ:

- Եվրոպական միության շրջանակներում ընդունվել են այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են 2002թ. Խորհրդի որոշումը կալանքի թույլտվության և հանձման ընթացակարգերի մասին Եվրոպական միության անդամ-պետությունների և Eurojust և European Judicial Network կառույցների միջև:
- Երկկողմանի, տարածաշրջանային, միջազգային համաձայնագրերի շրջանակներում իրավական փոխօգնության ոլորտում տարբեր անդամ-պետությունների իրավապահ մարմինների միջև ուղղակի շփումները¹⁹ առավել սերտանում են:

¹⁴ Ստորագրվել է Պալեռնոյի կոնֆերանսի ժամանակ, 2000թ. դեկտեմբերի 12-15:

¹⁵ Ստորագրվել է բարձրաստիճան կոնֆերանսի ժամանակ, որը տեղի է ունեցել Մեքսիկայի Մերիդա քաղաքում, 2003թ. դեկտեմբերի 9-11:

¹⁶ Ընդունվել է 2005թ. ապրիլի 13-ին ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի 91-րդ լիազուգումար նիստի ժամանակ, A/RES/59/290 Բանաձևի միջոցով:

¹⁷ Ընդունվել է Խորհրդի 2000թ. մայիսի 13-ի ակտի միջոցով, Եվրոմիության վերաբերյալ պայմանագրի 34 հոդվածի համաձայն:

¹⁸ Ստորագրվել է Մոլդովայի Չիսինաու քաղաքում, 2002թ. հոկտեմբերի 2-ին:

¹⁹ «դատական մարմիններ» տերմինը ասյտեղ օգտագործվում է լայն իմաստով բնորոշելու դատավորներին, դատախազներին եւ բարձրաստիճան իրավապահ պաշտոնյաներին, որոնք պատասխանատու են քրեական գործերով դատական համագործակցության ապահովման համար:

12. Նշված համաձայնագրերով ապահովվող հնարավորությունները իրենց մեջ նորարարություն են պարունակում իրավական համակարգի համար: Դրանք ընդունվել են մեկ պետության դատական համակարգից²⁰ մեկ այլ պետության դատական համակարգին տեղեկատվության ազատ փոխանցումը ապահովելու համար: Իրավական փաստաթղթերը, որոնք գործում են Եվրոպական միության անդամ-պետությունների մեծ մասում, հնարավորություն են տալիս իրավապահ մարմինների ներկայացուցիչներին հաղորդել հանցագործությունների մասին և փոխանցել համապատասխան տեղեկություններ: Այս պրակտիկան ամրագրված է Նախարարների կոմիտեի թիվ Rec(2000)19 Հանձնարարականի, համաձայն որի *«...և վերջապես, անհրաժեշտ է քննարկել տարրեր երկրների դատախազների միջև տեղեկատվության անմիջական փոխանակմանը նպաստող առկա մեխանիզմների ընդլայնման հնարավորությունները»²¹:*

13. Ներկայումս անհրաժեշտ է դիտարկել, թե արդյո՞ք վերոնշյալ նորարարությունները ունեն պրակտիկ նշանակություն, մասնավորապես. արդյո՞ք միջազգային պայմանագրերի ընդունման արդյունքում տեղի են ունենում անդամ-պետությունների ներպետական օրենքների և պրակտիկայի փոփոխություններ և, վերջապես, օգտագործում են արդյո՞ք դատախազները այս նոր փաստաթղթերը, և տեղյակ են արդյո՞ք տեղի ունեցած փոփոխություններին, եթե այո, ապա՝ որքա՞ն:

14. CCPE կողմից կատարված նախնական ուսումնասիրությունները²² վկայում են այն մասին, որ միջազգային համագործակցությունը հաստատվել է դեռևս 90-ականներին, այն երբեմն իրականացվում է ի շնորհիվ գործնական լուծումների և գործընթացի մասնակից կողմերի ուղղակի շփումների: Որոշ երկրներ ընդգծում են մասնակից կողմերի մասնագիտացման զարգացումը և տեղեկությունների փոխանակման գործընթացի առավել բարելավումը:

15. Այնուամենայնիվ, կան նաև այնպիսի տարրեր, որոնք խոչընդոտում են քրեական գործերով միջազգային համագործակցությանը և դանդաղեցնում են միջազգային համագործակցության գործընթացը, մասնավորապես.

²⁰ Նախորդ հղումը:

²¹ Բանաձև 39 վերաբերյալ մեկնաբանություններ:

²² CCPE-BU (2007)12

- իրավական համագործակցության համաեվրոպական մեխանիզմները ոչ միշտ են համապատասխանում ներկայիս մարտահրավերներին և պահանջներին,
- իրավական փոխօգնության մասին խնդրանքները երբեմն ճիշտ չեն կազմված (կրճատ են կամ շատ մանրամասն, առանց ստորագրության կամ առանց բավարար չափով ուսումնասիրված տվյալների, սխալ թարգմանված, կամ առանց համապատասխանեցնելու գործող ընթացակարգերին և այլն), ինչն էլ խաթարում է միջազգային համագործակցության գործընթացը: Տվյալ երևույթները կարելի է բացատրել փորձի պակասի, ընթացակարգերի բարդության, ռեսուրսների պակասի գործոններով,
- փոխօգնության մասին խնդրանքի փոխանցումը հաճախ իրականացվում է դիվանագիտական ուղիների միջոցով, թեև Քրեական գործերով փոխօգնության եվրոպական կոնվենցիան (CETS No 30) և նրա №2 լրացուցիչ արձանագրությունը (CETS No 182) նախատեսում են փոխօգնության խնդրանքի փոխանցման և կատարման հարցում իրավապահ մարմինների միջև ուղղակի շփումներ: Մինչդեռ, իրավասու մարմինների վերաբերյալ տվյալների բացակայության պատճառով փոխօգնության մասին խնդրանքը փոխանցվում է կենտրոնական իշխանությունների միջոցով և եթե միաժամանակ օգտագործվում են փոխանցման տարբեր ուղիներ, խախտվում է համագործակցության գործընթացի հարթությունը,
- եթե իրավական փոխօգնության մասին խնդրանքների մեծ քանակը կաթվածահարում է գործընթացը, քանի որ խնդրանքի հասցեատեր կողմը հաճախ ժամանակ է տրամադրում քիչ կարևորություն ունեցող գործերով խնդրանքները բավարարելու վրա,
- ինչ վերաբերում է փոխօգնության մասին խնդրանքների բավարարմանը, ապա իրավական համագործակցության ընդհանուր եվրոպական մշակույթի, համագործակցության պրակտիկ միջոցների և ընթացակարգերի բացակայությունը ստիպում են համագործակցությունն իրականացնել ներպետական ընթացակարգերի համաձայն:

16. Սակայն միջազգային համագործակցության ոլորտի լուրջ դժվարությունները պայմանավորված են իրավական համակարգերի տարբերություններով: Ապացույցների ձեռք բերման միջոցները, կրկնակի քրեական պատասխանատվության հիմնախնդիրը, փոխօգնության խնդրանքով հանդես եկող կողմի կամ խնդրանքի մեջ քննարկվող մեղադրյալի բացակայության պայմաններում կայացված դատավճիռների համակարգը այն հիմնական խնդիրներն են, որոնք խոչընդոտում են տարբեր իրավական համակարգերի միջև միջազգային համագործակցության իրականացմանը:

Համագործակցությանը կարող է նպաստել նաև իրավական համակարգերի ներկայացուցիչների կողմից միմյանց իրավական համակարգերի փոխադարձ իմացությունը:

17. Այս դժվարությունները առավել զգալի են հանձման պարագայում: Օրինակ հանձման գործընթացը դադարեցվում է, եթե հանձման մասին խնդրանքի մեջ բերվում են քաղաքական հիմքեր: Կամ եթե խնդրանք ներկայացնող և հասցեատեր կողմերի իրավական համակարգերում միևնույն իրավական հասկացությունները տարբերվում են, կամ եթե առկա է ներպետական մարմնի կողմից խնդրանքի կրկնակի մերժումը:

18. Եվս մեկ բացասական երևույթը առանց օբյեկտիվ պատճառների գործընթացի հետաձգումն է: Տվյալ դեպքում խոսվում է ոչ թե կառուցվածքային կամ իրավական խնդիրների մասին, այլ մասնագիտական անկարողության և ոչ իրավական բնույթի բարդությունների մասին:

19. Այդ պատճառով պետք է ձևավորվեն այնպիսի միջոցներ և մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ստեղծել քրեական գործերով իրավական համագործակցության համընդհանուր մշակույթ, ինչպես կենտրոնական իշխանությունների, այնպես էլ առանձին դերակատարների մակարդակով:

20. Այս կապակցությամբ, CCPE վկայակոչում է Կազմակերպված հանցագործությունների գործերով մասնագիտացված դատախազների առաջին համաեվրոպական կոնֆերանսի²³ հետևյալ հանձնարարականները. «կազմակերպել դատախազների միջև առավել կառուցվածքային շփումներ և տեղեկությունների փոխանակում» և «դատախազների, մասնավորապես կազմակերպված հանցագործությունների գործերով մասնագիտացված դատախազների, միջև ընդհանուր շփումներն ու տեղեկատվության փոխանակումն ապահովելու, գործող կարգը լրացնելու նպատակով Եվրոպայի խորհրդի կողմից ստեղծել համակարգող խումբ՝ բաղկացած փոքր թվով դատախազներից» և «շփումներ հաստատել Եվրոպայի խորհրդի կապերը համակարգող խմբի և Eurojust կազմակերպության միջև(...)»:

21. Միաժամանակ, Եվրոպայի արդարադատության նախարարները և ներքին գործերի նախարարները, որոնք հանդիպել էին 2006թ. Մոսկվայում²⁴, համաձայնել էին, որ

²³ Տես՝ վերը նշված հղումը:

²⁴ Տես՝ վերը նշված հղումը:

«շփումների ներպետական ցանցը ստեղծվում է նպաստելու միջազգային դատական համագործակցության պատասխանատուների միջև շփումներին, հատկապես ահաբեկչության, կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության, տրաֆիկինգի և կիբեր հանցագործությունների դեմ պայքարի ոլորտներում»:

CCPE ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

22. CCPE կարևորում է քրեական գործերով միջազգային համագործակցության հիմնական ձեռքբերումները, մասնավորապես, վերջին տարիներին ընդունված եվրոպական և միջազգային փաստաթղթերը, ինստիտուցիոնալ կառուցվածքները, որոնց միջոցով համագործակցության մասնակիցների միջև ապահովում է փոխանակումը, ինչպես նաև դերակատարների միջև ձևավորված արդյունավետ շփումները: ԵԴԽԽ խորհրդ է տալիս Եվրոպայի խորհրդի և անդամ-պետությունների համապատասխան մարմիններին հետևողական լինել և իրենց ջանքերն ամրապնդել քրեական գործերով միջազգային համագործակցության եվրոպական իրավական մշակույթի զարգացման համար տարբեր անդամ-պետությունների միջև ինստիտուցիոնալ, նորմատիվ, միջանձնային շփումների համակարգ ձևավորելու նպատակով:

Աշխատանք միջազգային համագործակցության նորմատիվ շրջանակների ուղղությամբ

23. Միջազգային համագործակցության նորմատիվ շրջանակներն ամրապնդելու և փոխօգնության կոնկրետ լիազորություններով օժտված իրավապահ համակարգի ներկայացուցիչների ամենօրյա աշխատանքները ապահովելու նպատակով, ԵԴԽԽ կոչ է անում դիտարկվող երկրներում, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում, վավերացնել և արդյունավետ կիրառել համապատասխան Կոնվենցիաները, հատկապես սույն Կարծիքի 11-րդ կետում նշված Կոնվենցիաները:

24. Բացի այդ, CCPE խրախուսում է Եվրոպայի խորհրդի փաստաթղթերի արդիականացման ուղղությամբ շարունակական աշխատանքը: Հետևելով Գլխավոր դատախազների 7-րդ եվրոպական կոնֆերանսի կարծիին (Մոսկվա, 2006)²⁵, CCPE կոչ է անում Նախարարների կոմիտեին և Եվրոպայի խորհրդի համապատասխան կոմիտեներին շարունակել հանձնման, փոխօգնության և քրեական վարույթների փոխանցման վերաբերյալ փաստաթղթերի բարելավման ուղղությամբ տարվող

²⁵ Տես՝ վերը նշված հղումը

աշխատանքը: Դա կատարվում է փոխադարձ վստահության վրա հիմնված համագործակցության ճկուն ընթացակարգերի ստեղծման նպատակով, որը կնպաստի հանձնման գործընթացը պարզեցնելու միջոցով արագացմանը, եթե առկա է այն անձանց համաձայնությունը, որոնց վերաբերյալ ներկայացվել է հանձնման խնդրանքը և որոնց հիմնարար իրավունքները ամբողջովին երաշխավորվում են:

25. Այս կապակցությամբ, CCPE կոչ է անում Նախարարների կոմիտեին նախապատրաստել քրեական գործերով միջազգային համագործակցության Եվրոպայի խորհրդի ամբողջական կոնվենցիա:²⁶

26. CCPE նաև կոչ է անում անդամ պետությունների օրենսդիր մարմիններին դիտարկել ներպետական ընթացակարգերը պարզեցնելու հնարավորությունը, դրանք առավել արդյունավետ դարձնելու նպատակով, ստեղծելու համար մի համակարգ, որտեղ ընթացակարգերի ծավալը չի խոչընդոտում փոխօգնության խնդրանքները կատարմանը, մասնավորապես հանձնման դեպքերով: Ցանկացած դեպքում պարզեցված կարգը պետք է հիմնվի դիտարկվող անձի իրավունքները հարգելու սկզբունքի վրա:

Աշխատանք միջազգային համագործակցության որակի բարձրացման ուղղությամբ

27. Հիմնվելով թիվ Rec(2000)19 Հանձնարարականի (մասնավորապես 38-րդ հոդվածի) վրա, Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհրդի/CCJE Կարծիք No4(2003) վրա, դատավորների ներպետական և եվրոպական նախնական և ընթացիկ վերապատրաստման վրա²⁷ և Միջազգային և եվրոպական իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու հարցում տեղական դատավորների դերի մասին No9(2006)²⁸

²⁶ 2007թ. հունիսի 18-ին Քրեական հիմնախնդիրներով Եվրոպական հանձնաժողովի (CDPC) 56-րդ նստաշրջանի բացման խոսքում, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Թ. Դեվիսը առաջարկեց անդրադառնալ այս նախաձեռնությանը մի տաս տարուց. «Նպատակը պետք է նորացվի, առավել արդյունավետ դարձվի եւ համապատասխանեցվի մեկ ընդհանուր «տանիքի» քրեական գործերով միջազգային համագործակցության վերաբերյալ մեր բոլոր գործող կոնվենցիաների հիմքի վրա: Ես գիտեմ, որ սա երկարաժամկետ, հավաքնոտ եւ միգուցե հակասական նախագիծ է, բայց ես չեմ կարծում, որ հնարավոր է խոսել չափից ավելի հավաքնոտ լինելու մասին, երբ խոսքը գնում է հանցավորության դեմ պայքարի մասին»: նաման կոնվենցիայի նախագիծ մշակվել էր տարիներ առաջ, սակայն այն հետաձգվել էր այդ ժամանակ:

²⁷ Տես՝ մասնավորապես, Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (CCJE) Կարծիք թիվ (2003) 4 մասեր 43 եւ 44

²⁸ Տես՝ մասնավորապես, Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (CCJE) Կարծիք թիվ (2006) 9 մասեր 7,8 եւ 11

Կարծիքի վրա, ինչպես նաև Վարչապետի տեղի ունեցած Դատախազների եվրոպական կոնֆերանսի եզրակացությունների²⁹ վրա, CCPE կոչ է անում ընդլայնել միջազգային համագործակցության մեջ ներգրավված դատախազների և այլ մասնակիցների վերապատրաստման գործընթացը: Միջազգային համագործակցության ուղղությամբ մասնագիտական վերապատրաստումը պետք է իրականացվի ոչ միայն գործող կոնվենցիաների թեմայի վերաբերյալ, այլ նաև կազմակերպությունների և համակարգերում գործող օպերատիվ տվյալների վերաբերյալ: Դա հնարավորություն կտա միջազգային համագործակցության մեջ ներգրավված գործող անձանց ձեռք բերել փոխօգնության մասին իրենց խնդրանքները ավելի բարձր որակի վրա կազմելու ունակություններ և ավելի լավ հասկանալ և կատարել իրենց հասցեագրված խնդրանքները, բարելավել փոխօգնության խնդրանքներն առավել հստակ ձևակերպելու ունակությունները և նվազեցնել երրորդ կողմին՝ քիչ կարևորություն ունեցող գործերով խնդրանքներով ծանրաբեռնումը:

28. Երբեմն անհրաժեշտ չէ կամ նույնիսկ անհնար է, որ յուրաքանչյուր դատախազ կամ դատավոր լավ տիրապետի միջազգային փոստաթղթերին կամ փոխանցման ուղիներին: Բայց շատ կարևոր է, որպեսզի նրանցից ոմանք, հատկապես այս հարցերով մասնագիտացած դատախազները լավ տիրապետեն և նաև վերապատրաստվեն: Հետևաբար CCPE կոչ է անում յուրաքանչյուր անդամ պետությանը ընդունել համապատասխան համակարգ, որով կերաշխավորվի նման մասնագիտացումը:

29. Քրեական արդարադատության ոլորտում դատախազների և դատավորների, ինչպես նաև պաշտպանությունն իրականացնող փաստաբանների վերապատրաստման ծրագրերը պետք է իրականացվեն նաև մարդու իրավունքների թեմայով: Ի լրացումն մարդու իրավունքների ոլորտի հիմնարար տարրերի և համապատասխան չափանիշների ընդհանուր ուսումնասիրմանը, պետք է նաև սահմանել և ճանաչել հիմնարար իրավունքները և համապատասխան չափանիշները, ինչն ուղղակիորեն վերաբերում են քրեական գործերով միջազգային համագործակցության շրջանակներում փոխօգնության խնդրանքի կատարման ենթակա քրեական վարույթներում ներգրավված անձանց: Սրա արդյունքում ընդունվելու են մեկնաբանություններ յուրաքանչյուր օրենքի աղբյուրի վերաբերյալ, քանի որ դիտարկվող իրավունքները և չափանիշները տարբերվում են ըստ

²⁹ «Քաշվի առնելով, որ մարդկային գործոնը շատ կարևոր է միջազգային համագործակցության լիարժեք ապահովման համար, Կոնֆերանսը, ուշադրություն դարձնելով այն կարևորությանը, որով Հանձնարարական թիվ Rec (2000)19 օժտել է դատախազների վերապատրաստմանը, խստագույնս ընդգծում է, որ նմանատիպ վերապատրաստումը պետք է պահովվի, մասնավորապես միջազգային հանցավորության զարգացման հետ համաքայլ լինելու նպատակով»:

համագործակցության ձևերի: Տվյալ մեկնաբանությունները կամ հատուկ փաստաթղթերը պետք է հաշվի առնեն նաև նախկին պրակտիկան և նախադեպային իրավունքը:

30. Այս գիտելիքները պետք է տարածվեն համապատասխան միջոցներով, մասնավորապես, ներպետական դատական և դատախազական վերապատրաստման կենտրոնների կողմից: Դատական և դատախազական վերապատրաստման համապատասխան եվրոպական մարմինները, ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի Lisbon Network (Լիսաբոնյան ցանցը) և European Training Network (Եվրոպական վերապատրաստման ցանցը) նույնպես կարող են այս ենթատեքստում առաջատար դեր կատարել:

31. Անհրաժեշտ է անցկացնել օտար լեզվի վերապատրաստման դասընթացներ, ինչը խթանելու է դերակատարների միջև ուղղակի շփումները, բարձրացնելու է փոխօգնության խնդրանքների ձևակերպման որակը և հասցեագրված խնդրանքների առավել լավ ընկալումը:

32. Բացի այդ, CCPE նաև կոչ է անում ներպետական իրավասու մարմիններին ապահովել անհրաժեշտ տեղեկատվական միջոցները: Մասնավորապես, խոսքը գնում է դատական փոխօգնության վերաբերյալ ձեռնարկների ստեղծման մասին, որոնք տեղեկություններ կպարունակեն պետությունների իրավական համակարգերի մասին, օրինակ, այսպես կոչված Fiches belges³⁰, որն օգտագործվում է European Judicial Network (Եվրոպական դատական ցանց) կողմից որպես աշխատանքային միջոց և որը նպաստում է պետությունների իրավական համակարգերի փոխադարձ ընկալմանը: Խոսքը գնում է նաև շրջաբերականները և ուղեցույցները մասին, որոնք ամփոփում են համապատասխան մեխանիզմները, լավագույն դեպքերի հավաքածուների և բազմալեզու ձևերի մասին, որոնք նպատակ ունեն մշակել ընդհանուր ձև գարգացման դերակատարների միջև փոխօգնության միջոցների առավել բարձրորակ կիրառման նպատակով, այդ թվում՝ Ինտերնետի միջոցով:

Ըստ անհրաժեշտության, այս գործընթացը կարող է իրականացվել CCPE աջակցությամբ: Այս ենթատեքստում, CCPE վկայակոչում է Եվրոպայի արդարադատության և ներքին

³⁰ Fiches belges դատական փոխօգնության մեջ ներգրավված դերակատարներին տրամադրում է ամբողջ անհրաժեշտ տեղեկությունները Եվրոպական միության պետությունների օրենսդրության եւ կազմակերպության մասին, որի միջոցով դատական համագործակցության կատարումը նախատեսվում է:

գործերի նախարարների 2006թ. Մոսկվայի որոշումը³¹ այն մասին, որ. «անդամ պետություններում կիրառվող համագործակցության տարբեր ձևերի ընթացակարգերի տվյալների բազայի ձևավորումը, նպաստելու են տվյալների հասանելիությունը» և վերահաստատում է իր աջակցությունը այս առաջարկին: Վերը նշված միջոցները կարող են փոխանցվել Եվրոպայի խորհրդին տվյալների բազան հարստացնելու նպատակով:

33. Ինչ վերաբերում է դատախազների մասնագիտական վերապատրաստմանն ու տեղեկատվությանը, CCPE նույնպես կարող է կարևոր դեր խաղալ մասնագիտացված դատախազների հանդիպումները կազմակերպելու հարցում, ինչպես օրինակ Կասերտայի կոնֆերանսը: Տվյալ հանդիպումները կարող են կազմակերպվել Եվրոպայի խորհրդի այլ շահագրգիռ մարմինների և եվրոպական և միջազգային այլ համապատասխան կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցելով:

34. Իրավական փոխօգնության խնդրանքի փոխանցումը և դրա որակը կախված է փոխանցման մեթոդների զարգացման հետ: CCPE ընդգծում է, որ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կողմից առաջարկվող հնարավորությունները կարող են լայնորեն կիրառվել մասնավորապես փաստաթղթերի գաղտնիությունը և իսկականությունը ապահովող անվտանգ էլեկտրոնային ուղիների միջոցով տեղեկատվության փոխանակումը ապահովելու նպատակով:

Իրավական դերակատարների միջև փոխանակման ընդլայնումը

35. Եվրոպայի խորհրդի մակարդակով, CCPE -ն Նախարարների կոմիտեին կոչ է անում ապահովել քրեական գործերով համագործակցության և տեղեկատվության փոխանակման համակարգված գործընթացի համապատասխանեցումը European Judicial Network և Eurojust կազմակերպությունների կողմից սահմանած կանոններին, որոնք մասնավորապես նպաստելու են նման կառույցների անդամ չհանդիսացող, Եվրոպայի միության անդամ պետություններին, Եվրոպայի խորհրդի համապատասխան փաստաթղթերի հիման վրա նույնօրինակ ծառայություններից օգտվելու հնարավորությանը:

36. «Եվրոպայի խորհրդի և Եվրոպայի միության միջև փոխըմբռնման հուշագրի»³² պարտավորությունների համաձայն, կարող է ձևավորվել Եվրոպայի խորհրդի ֆորմալ և ոչ

³¹ Տես՝ նախորդ հղումը:

³² Հուշագրի հոդված 29:

Ֆորմալ միջնորդական դերակատարության վերաբերյալ մեկ ընդհանուր մոտեցում՝ նախատեսված այն դեպքերի համար, երբ առաջանում են քրեական արդարադատության ոլորտում համագործակցության հետ կապված խնդիրներ:

37. Առանց խաթարելու խնդրանքների ուղղակի և ապակենտրոնացված փոխանցման մեխանիզմները, յուրաքանչյուր պետությունում կարող է ստեղծվել համապատասխան «մասնագիտացված ստորաբաժանում», որն օժտված է լինելու դերակատարների կողմից փոխօգնության խնդրանքներն ուղղարկելիս և ստանալիս հանդիպող դժվարությունների լուծմանն աջակցելու գործառույթներով: Ստորաբաժանումը իր աշխատանքները կատարելու է փոխօգնության գործընթացին խոչընդոտող կամ այն դանդաղեցնող խնդիրները վերացնելու ուղղությամբ:

38. CCPE նաև կոչ է անում անդամ պետություններին ամրապնդել քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության կամքի դրսևորումը և խրախուսել իրավական դերակատարների լիակատար և ուղղակի մասնակցությանը: ԵԴԽԽ կոչ է անում անդամ պետություններին ստեղծել կոնտակտային տվյալների և հասցեների ցանկ, որտեղ նշված կլինեն համապատասխան կոնտակտային անձերի անունները, ինչպես նաև նրանց մասնագիտացման ուղղությունը, պատասխանատվության ոլորտը և այլն, ինչպես նաև հրապարակել այս ցանկը Եվրոպայի խորհրդի կողմից համակարգվող կայքում: Այս ցանկը պետք է պետությունների կողմից պարբերաբար թարմացվի՝ ապահովելու համակարգի արդյունավետությունը: Դա հնարավորություն կտա, ի կատարումն համապատասխան կոնվենցիաների, ապահովել համագործակցության դերակատարների միջև ուղղակի փոխանակումը, առանց օգտագործելու ծավալուն ընթացակարգերից բաղկացած դիվանագիտական ալիքները:

39. Բացի այդ, CCPE ընդունում է, որ կապի ուղղությամբ աշխատող դատավորների/դատախազների միջև փոխանակումները, ինչպես նախատեսում է թիվ Rec(2000)19 Հանձնարարականի 38-րդ հոդվածը, «լավ պրակտիկա» է ձևավորում, որը անհրաժեշտ է հնարավորինս զարգացնել, քանի որ այն նպաստում է պետությունների դատական համակարգերի միջև շփումներին, այս համակարգերի փոխադարձ իմացությանը և հետևաբար նպաստում է միջազգային համագործակցության դերակատարների միջև վստահության ամրապնդմանը:

40. CCPE կոչ է անում, որպեսզի դատախազությունները զարգացնեն փոխադարձ համագործակցությունը փոխօգնության խնդրանքները կազմելու և կատարելու փուլում՝ ըստ անհրաժեշտության:

Երրորդ պետությունների և միջազգային քրեական դատարանների հետ համագործակցության ընդլայնում

41. Եվրոպայի խորհրդի շրջանակներում, քրեական գործերով միջազգային համագործակցության վերաբերյալ, պետք է ուշադրություն դարձնել միջազգային քրեական դատարանների հետ համագործակցության ընթացքում առաջացող խնդիրներին: Պետք է նաև հաշվի առնել այն անհրաժեշտ ջանքերը, որոնք գործադրվում են անդամ պետությունների միջազգային քրեական դատարանների հետ համագործակցությունն ամրապնդելու ուղղությամբ, անդամ պետությունների կողմից այս դատարանների իրավասությունների լիակատար ճանաչման ուղղությամբ:

42. Պետք է հաշվի առնել, որ Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիաները կիրառվում են նաև ոչ եվրոպական պետություններում:

43. Երրորդ պետությունների հետ անդամ պետությունների համագործակցությունը ընդլայնելու նպատակով, CCPE կոչ է անում Նախարարների կոմիտեին դիտարկել Հանձման հարցերով եվրոպական կոնվենցիային և Քրեական գործերով իրավական փոխօգնության եվրոպական կոնվենցիային և դրանց արձանագրություններին Եվրոպայից դուրս որոշ պետությունների միանալու առաջարկ ներկայացնելու հարցը:

Միջազգային համագործակցության իրականացման նպատակով տրամադրված ռեսուրսների բաշխում

44. CCPE խորհուրդ է տալիս, որպեսզի անդամ պետությունները պատշաճ ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսներ տրամադրեն այն ծավալով, որ քանակական և որակական առումով բարելավվի քրեական գործերով միջազգային համագործակցությունը, մասնավորապես դատախազների և դատախազությունների մասով: Նախ պետք է նշանակվեն քրեական գործերով փոխադարձ օգնության հարցերով մասնագիտացված դատավորներ և դատախազներ: Այս ուղղությամբ տարվող ջանքերը պետք է նաև հնարավորություն տան դերակատարներին անհրաժեշտ ժամանակ

տրամադրել փոխօգնության խնդրանքները պատշաճ կերպով ձևակերպելու, կազմելու և դրանց պատասխանելու համար: Ռեսուրսները, վերջապես, պետք է տրամադրվեն՝ միջազգային համագործակցության լեզվական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ դատարաններին և դատախազություններին տրամադրելով համապատասխան թարգմանչական միջոցներ:

ԵԴԽԽ հասանելիությունը այլ մարմինների հետ համագործակցության համար

45. Անհրաժեշտության դեպքում, CCPE պատրաստ է աջակցել տվյալ ոլորտի ցանկացած նմանօրինակ նախաձեռնությանը: Նա վերահաստատում է, որ հասանելի է նախ Եվրոպայի խորհրդի շրջանակներում համապատասխան հանձնաժողովների համար, ինչպես նաև այլ համապատասխան եվրոպական և միջազգային կառույցների և կազմակերպությունների համար: Դատախազությունները, որոնց պատրաստվածությունը, արհեստավարժությունը գնալով աճում է, աշխատելով նման խնդիրների հետ դառնում են «միջազգային համագործակցության շահերի պաշտպաններ» ճիշտ այնպես, ինչպես նշված է թիվ Rec(2000)19 Հանձնարարականում³³:

³³ Տե՛ս՝ Հոդված 3:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Եվրոպայի շրջանակներում քրեական ոլորտում համագործակցության իրավական մշակույթի զարգացման նպատակով ինստիտուցիոնալ, նորմատիվ և միջանձնային շփումների ապահովման համար, Եվրոպայի դատախազների խորհրդակցական խորհուրդը Նախարարների կոմիտեին և Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին կոչ է անում.

- բարելավել միջազգային համագործակցության նորմատիվ շրջանակները հետևյալ ուղղություններով.
 - նախապատվությունը շարունակաբար տալով քրեական արդարադատության ոլորտում եվրոպական առկա կոնվենցիաների բարելավմանը,
 - արագացնելով համապատասխան կոնվենցիաների վավերացումը և արդյունավետ կիրառումը և ձգտել պարզեցնել փոխադարձ օգնության ներպետական ընթացակարգերը.
- բարձրացնել միջազգային համագործակցության որակը հետևյալ ուղղություններով.
 - դատախազների, ինչպես նաև միջազգային իրավական համագործակցության այլ դերակատարների վերապատրաստման զարգացման,
 - յուրաքանչյուր անդամ պետությունում այնպիսի կառույցի ստեղծման ուղղությամբ, որը կապահովի որոշ դատախազների և դատավորների մասնագիտացումը միջազգային համագործակցության հարցերով,
 - միջազգային քրեական դատավարության ոլորտում մարդու իրավունքների և ստանդարտների մասին պարբերաբար թարմացվող՝ առկա մասնագիտացված փաստաթղթերի կամ մեկնաբանությունների ընդունման,
 - դերակատարներին դատական համակարգերի և ընթացակարգերի վերաբերյալ փոխադարձ տեղեկատվության միջոցների տրամադրման, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում տվյալների բազայի ստեղծման միջոցով,
 - տարբեր անդամ պետություններ ներկայացնող դերակատարների միմյանց հետ հանդիպելու և փոխանակելու հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ, մասնավորապես դատախազների հատուկ ծրագրերի և սեմինարների միջոցով,
 - փոխօգնության խնդրանքի փոխանցման և նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջոցով դրանք փոխանցելու ուղիների ստեղծման ուղղությամբ, ինչպես նաև խնդրանքի որակը բարձրացնելու ուղղությամբ՝ օտար լեզվի և դրանք կազմելու հարցում,
 - տեղեկատվության ինքնաբերական և ուղղակի փոխանցման ապահովման ուղղությամբ.
- իրավական համագործակցության դերակատարների միջև փոխանակումը ընդլայնել հետևյալ ուղղություններով.
 - Եվրոպայի խորհրդի մակարդակով համակարգված համագործակցության և տեղեկատվության փոխանակման ստեղծելու ուղղությամբ, որն իրականացվելու է European Judicial Network և Eurojust միջոցով,
 - յուրաքանչյուր երկրում ներպետական իրավական համակարգի առանձնահատկություններից ելնելով, ստեղծել դերակատարների կողմից փոխօգնության խնդրանքներն ուղղարկելիս և ստանալիս հանդիպող դժվարություններին աջակցելու գործառույթներով օժտված «մասնագիտացված ստորաբաժանում» ստեղծելու ուղղությամբ,
 - կոնտակտային տվյալների և հասցեների ցանկի ստեղծման ուղղությամբ, որտեղ նշված են համապատասխան կոնտակտային անձների անուններն, ինչպես նաև նրանց մասնագիտացման ուղղությունը, պատասխանատվության ոլորտը և այլն, ինչպես նաև այս ցանկի տպագրումը Եվրոպայի խորհրդի կողմից համակարգվող կալքում,
 - իրավասու դատախազների և դատավորների միջև տեղեկատվության փոխանակումը զարգացնելու ուղղությամբ,
 - փոխօգնության խնդրանքը կազմելու և կատարելու փուլում համագործակցելու ուղղությամբ.
- Եվրոպայի խորհրդի շրջանակներում խրախուսել երրորդ պետությունների, միջազգային քրեական դատարանների և այլ համապատասխան եվրոպական և միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ համագործակցության ամրապնդմանը,
- աշխատանք տանել դատարանների և դատախազությունների շրջանակներում քրեական գործերով միջազգային համագործակցությանն առնչվող բյուջետային և մարդկային ռեսուրսի ավելացման ուղղությամբ:

Հավելված

**Քրեական գործերով փոխադարձ օգնության համագործակցության մասին
Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները**

024	Հանձնման մասին եվրոպական կոնվենցիա
030	Քրեական գործերով փոխադարձ օգնության եվրոպական կոնվենցիա
051	Պայմանականորեն դատապարտված կամ պայմանականորեն ազատված անձանց վերահսկողության մասին եվրոպական կոնվենցիա
052	Երթևեկության կանոնների խախտումների համար պատժի մասին եվրոպական կոնվենցիա
070	Քրեական գործերով դատավճիռների միջազգային վավերականության մասին եվրոպական կոնվենցիա
071	Անչափահասների հայրենադարձման մասին եվրոպական կոնվենցիա *
073	Քրեական գործերով վարույթների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիա
082	Մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների նկատմամբ ժամկետների վաղեմության անկիրառելիության մասին եվրոպական կոնվենցիա
086	Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
088	Ավտոտրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու միջազգային հետևանքների մասին եվրոպական կոնվենցիա
090	Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիա
097	Օտարերկրյա օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության մասին եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
098	Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրություն
099	Քրեական գործերով փոխադարձ օգնության եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
101	Մասնավոր անձանց կողմից հրազենի ձեռքբերումն ու պահելը վերահսկելու մասին կոնվենցիա
112	Դատապարտված անձանց փոխանցման մասին կոնվենցիա
116	Բռնությամբ կատարված հանցագործությունների գոհերին փոխհատուցելու մասին եվրոպական կոնվենցիա
119	Մշակութային արժեքների նկատմամբ իրավախախտումների մասին եվրոպական կոնվենցիա*
141	Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին կոնվենցիա
156	Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի թիվ 17 հոդվածը կիրարկող համաձայնագիր թմրանյութերի և հոգեմետ նյութերի ծովով իրականացվող ապօրինի տեղափոխումների մասին
167	Դատապարտված անձանց փոխանցման մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
172	Քրեական օրենսդրության միջոցով շրջակա միջավայրի պաշտպանության մասին կոնվենցիա*
173	Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա
182	Քրեական գործերով փոխադարձ օգնության եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրություն
185	Կիրեռ հանցագործությունների մասին կոնվենցիա
189	Կիրեռ հանցագործությունների մասին կոնվենցիայի լրացուցիչ Արձանագրություն համակարգչային ցանցերի միջոցով կատարվող ռասիստական և օտարատյացամետ բնույթի գործողությունների քրեականացման վերաբերյալ
190	Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիան փոփոխող արձանագրություն*
191	Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն
196	Ահաբեկչության կանխարգելման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
197	Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա*
198	Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման , հետախուզման , առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա*

«*» նշված կոնվենցիաները դեռևս ուժի մեջ չեն մտել:

ԵՆ կոնվենցիաների հայերեն պաշտոնական անվանումները բերված են ԵՆ տեղեկատվական գրասենյակի պաշտոնական կայք-էջից՝ http://www.coc.am/page.php?page_id=49 (հղումը՝ L. Արսրաջյանի)